ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-6-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲՐՅՈՒՍԵԼ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Արմեն Սիմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2024թ. դեկտեմբերի 4-6-ը Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել)

4. Հրավիրող կողմը.

Եվրոպական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Նպատակը՝ ԵՄ և դրա անդամ պետությունների միջև «Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի շրջանակներում համատեղ կոմիտեի երկրորդ նիստի մասնակցություն:

6. Քննարկված թեմաները.

Քննարկվել են «Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի վարչական կիրարկմանը և այլ հարցերին առնչվող թեմաներ, մասնավորապես, հավելված 2-ում ներկայացված ԵՄ կանոնակարգերի ներդրման անհրաժեշտությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպման ընթացքում ԵՄ ներկայացուցիչների կողմից ներկայացվել են սահիկաշարեր ԵՄ օրենսդրության՝ ավիացիոն վառելիքի լիցքավորման, անօդաչու թռչող սարքերի և ուղևորների իրավունքների վերաբերյալ:

Հայկական կողմը ներկայացրել է թռիչքների թույլտվությունների, նոր ուղղությունների, ուղևորահոսքի և ավիաընկերությունների ավելացման վերաբերյալ, ավիացիոն ոլորտի քաղաքականության և կարգավորման զարգացումների և թարմացված տեղեկատվության վերաբերյալ սահիկաշարեր, ինչպես նաև օրակարգում ներառված այլ հարցերի մասին տեղեկատվություն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ժամանակ ստորագրվել է 2023 թվականի հունիսի 9-ին Երևանում տեղի ունեցած ՀՀ-ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու վերաբերյալ համաձայնագրի ներքո գործող ՀՀ-ԵՄ համատեղ կոմիտեի առաջին հանդիպման համաձայնեցված արձանագրությունը (Agreed Minutes of the First Meeting of the EU-Armenia Joint Committee):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ավիացիոն ոլորտի քաղաքականության և կարգավորման զարգացումների, Արևելյան Համագործակցության ծրագրի (Eastern Partnership Project) շրջանակներում EASA-ի կողմից նախատեսվող աջակցության քննարկում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

09.12.2024թ.